



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը


08.06.2012 թվականի N.38.-14

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ  
ԱՌԻԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N° 165-Ն հրամանի պահանջները.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում ձևավորել ներքին աուդիտի կոմիտե:
2. Հաստատել «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի կոմիտեի գործունեության կարգը»՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի կոմիտեի կազմը»՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Սույն հրամանի հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:



Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ԿԱՐԳ

### «Հնեագետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի կոմիտեի գործունեության

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է «Հնեագետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ներքին աուդիտի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գործունեության հետ կապված իրավահարաբերությունները:
2. Նախարարության Կոմիտեն խորհրդակցական մարմին է:

#### II. Կոմիտեի աշխատանքների կազմակերպումը

3. Կոմիտեի նախագահը Հայաստանի Հանրապետության Հնեագետիկայի և բնական պաշարների նախարարն (այսուհետ՝ Նախարար) է:
4. Ներքին աուդիտի համակարգը գործում է Նախարարի ենթակայությամբ, որն ապահովում է Նախարարությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:
5. Կոմիտեի անդամները պետք է ունենան «Հին և նոր հնեագետիկայի նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N° 165-Ն հրամանով հաստատված հավելվածի 8-րդ կետով սահմանված ներքին աուդիտի փորձին հավասարեցվող առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ:
6. Կոմիտեն Նախարարի կողմից ձևավորված և իր կողմից ղեկավարվող կոլեգիալ մարմին է:
7. Կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում արտահերթ նիստ կարող է հրավիրվել կոմիտեի նախագահի, կոմիտեի անդամների պարզ մեծամասնության կամ ներքին աուդիտի բաժնի պետի նախաձեռնությամբ:

8. Կոմիտեի նիստը իրավագոր է, եթե դրան մասնակցում է կոմիտեի անդամների կեսից ավելին:
9. Կոմիտեի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Կոմիտեի նախագահի ձայնը վճռորոշ է:
10. Կոմիտեի նիստերը վարում է կոմիտեի նախագահը:
11. Կոմիտեի նիստերին կարող են հրավիրվել նիստի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:
12. Կոմիտեի նիստերը գումարվում են կոմիտեի նախագահի կողմից հաստատված օրակարգով որում նշվում են՝
  - 1) նիստի անցկացման վայրը, օրը և ժամը,
  - 2) քննարկման ենթակա հարցերը,
  - 3) քննարկվող յուրաքանչյուր հարցի, զեկուցողի անուն, ազգանունը:
13. Կոմիտեի յուրաքանչյուր անդամ նիստի օրակարգում ընդգրկելու համար կարող է նիստի հրավիրումից հինգ օր առաջ հարց ներկայացնել օրակարգ քննարկման համար:
14. Կոմիտեի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերվող այլ փաստաթղթերը քարտուղարի կողմից Կոմիտեի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն երեք օր առաջ:

#### **IV. Կոմիտեի նպատակը և իրավասությունները**

15. Կոմիտեի նպատակն է աջակցել Նախարարության ներքին աուդիտի համակարգին:
16. Կոմիտեի իրավասությունները.
  - 1) ներքին աուդիտի բաժնի պետի կողմից ներկայացված ներքին աուդիտի կանոնակարգի հաստատում,
  - 2) ներքին աուդիտի բաժնի պետի կողմից ներկայացված ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի և դրանց փոփոխությունների նախագծերի քննարկում, որը վավերացվում է նախարարի կողմից,
  - 3) ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթի քննարկում,
  - 4) ներքին աուդիտի բաժնի պետի կողմից ներկայացված յուրաքանչյուր իրականացված ներքին աուդիտի հաշվետվության քննարկում և դրա վերաբերյալ որոշումների ընդունում,
  - 5) ներքին աուդիտի բաժնի պետի կողմից ներկայացված ներքին աուդիտի տարեկան հաշվետվության քննարկում,

6) Կոմիտեն և Նախարարը իրավունք ունեն ընդունել ներքին աուդիտի բաժնի եզրակացությունները և կատարել տրված առաջարկությունները, կամ, հակառակ դեպքում, ընդունել այն ռիսկերը, որոնք բխում են դրանց չկատարումից:

17. Աուդիտի ենթարկված ստորաբաժանումների ղեկավարները, եթե հանդիսանում են Կոմիտեի անդամ, իրենց ղեկավարած ստորաբաժանումում կատարված աուդիտի արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելիս քվեարկությանը չեն մասնակցում:

#### **V. Կոմիտեի նիստի արձանագրման և գործավարության կարգը**

18. Կոմիտեի յուրաքանչյուր նիստի արդյունքներն ամփոփվում են արձանագրությամբ:

19. Ներքին աուդիտի բաժնի պետը մասնակցում է Կոմիտեի նիստերին քարտուղարի կարգավիճակով՝ առանց քվեարկելու իրավունքի:

20. Կոմիտեի Նիստի արձանագրության մեջ նշվում է՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը և վայրը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը,

2) նիստի օրակարգը,

3) նիստին մասնակցող, հրավիրված անձանց անունները,

4) քննարկվող հարցերի, զեկուցումների հիմնական դրույթները,

5) ընդունված որոշումները, դրանց տարածման և /կամ/ հրապարակման ձևերը:

21. Նիստի արձանագրությանը կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութերը:

22. Կոմիտեի նիստերն արձանագրվում է քարտուղարի կողմից, ստորագրվում կոմիտեի նախագահի և քարտուղարի կողմից՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

23. Կոմիտեի նիստերի արձանագրությունները պահվում են ներքին աուդիտի բաժնում:

#### **VI. Կոմիտեի նախագահի և անդամների լիազորությունները**

24. Կոմիտեի նախագահը՝

1) նախագահում է կոմիտեի նիստերը,

2) հաստատում է Կոմիտեի նիստերի օրակարգը և ստորագրում Կոմիտեի նիստերի արձանագրությունները,

3) լսում է Կոմիտեի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս ցուցումներ ու հանձնարարականներ,

4) ընդունում է որոշումներ քննարկված հարցերի վերաբերյալ,

5) որոշում է Կոմիտեի նիստերին հրավիրվող անձանց կազմը,

6) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կարգով նախատեսված այլ լիազորություններ:

25. Կոմիտեի անդամն իրավունք ունի՝

- 1) ներկայացնելու հարցեր նիստերի օրակարգում ընդգրկելու համար,
- 2) ներկայացնելու բանավոր և գրավոր կարծիք Կոմիտեի նիստերում քննարկվող հարցերի վերբերյալ,
- 3) մասնակցելու որոշումների ընդունման համար նախատեսված քվեարկությանը:

26. Կոմիտեի անդամը պարտավոր է մասնակցելու Կոմիտեի նիստերին:

#### **VII. Կոմիտեի անդամի լիազորությունների դադարեցումը**

27. Կոմիտեի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

- 1) իր դիմումի համաձայն,
- 2) անհարգելի պատճառով երկու անգամ անընդմեջ Կոմիտեի նիստերին չներկայանալու դեպքում:

#### **VIII. Կոմիտեում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկատվության տարածումը և հրապարակումը**

28. Կոմիտեի նիստերի արձանագրությունները կամ արձանագրությանների քաղվածքները ստորագրումից հետո մեկ օրվա ընթացքում ներքին աուդիտի բաժնի պետի կողմից տրամադրվում են Կոմիտեի բոլոր անդամներին:

29. Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից այլ տեղեկատվության տրամադրումը կատարվում է միայն Կոմիտեի համաձայնությամբ, Նախարարի թույլտվությամբ:

**ԿԱԶՄ**

**ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության  
ներքին անուղիտի կոմիտեի**

1. Արմեն Խիկարի Մովսիսյան - ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար /նախագահ/
2. Իոսիֆ Գեորգիի Իսայան - ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
3. Կարեն Աշոտի Ղահրամանյան - ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար
4. Ռուզաննա Ազատի Փիլոյան - ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ